

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-32

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄՍԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«21»_01_2020 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ «ՀՀ ԳԱԱ»), որը գործում է ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Սաղյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված **260.166.200 (երկու հարյուր վաթսուն միլիոն մեկ հարյուր վեց հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

- 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
- 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
- 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,
- 2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիտության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,
- 2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **260.166.200 (երկու հարյուր վաթսուն միլիոն մեկ հարյուր վաթսուն վեց հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ.

բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝



ՌԱԴԻԿ ԱՆԻՏԻՄՅԱՆ




ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

ք. Երևան, Գյուրջյան 14

ք. Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/հ 900018005729
ՀՎՀՀ 00871944

Տնօրեն՝



ԱՇՏԻՄՅԱՆ



Օրագրի գիտական ղեկավար՝



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան

Հավելված 1
2020 թ.
« 21 » 01
N 2-32 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրողներս, ՀՀ ԳԱԱ-ի Նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Աշոտ Մաղյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել « 21 » 01 2020 թ. N 2-32 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 260.166.200 (երկու հարյուր վաթսույն միլիոն մեկ հարյուր վաթսույն վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա՝

Նախագահ՝

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Տնօրեն՝

ԱՇՈՏ ՄԱԳՅԱՆ



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Ծրագրի հիմքում ընկած է Կենտրոնի ստորաբաժանումների բազմալյա գիտահետազոտական գործունեությունը, որն ուղղորդված է արդի կենսատեխնոլոգիական խնդիրների լուծմանը հետևյալ ոլորտներում՝ կենսադեղագործություն, կենսաբժշկագիտություն, արդյունաբերական կենսատեխնոլոգիա, կենսաէներգետիկա, գյուղատնտեսական և սննդային կենսատեխնոլոգիա, բնապահպանական (էկոլոգիական) կենսատեխնոլոգիա և այլն:

Կենտրոնի զարգացման գերակա նպատակն է կայուն և մրցունակ գիտական, գիտաարտադրական ու տեխնոլոգիական բազայի ձևավորումը՝ կենսատեխնոլոգիայի ոլորտի գիտահետազոտական կազմակերպություններին ներկայացվող միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Կենտրոնի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները հիմնականում վերաբերվում են կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներին և պարունակում են հիմնարար ու կիրառական հետազոտությունների բաղադրիչ:

Հիմնարար բնույթի աշխատանքները կունենան հնարավորինս բարձր որակ, ինչի ապացույցը կհանդիսանա կատարված աշխատանքների տպագրությունը տեղական և արտերկրի բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունը: Կիրառական բնույթի աշխատանքներն անհրաժեշտաբար կներկայացվեն արտոնագրման՝ նկատի ունենալով դրանց հետագա առևտրայնացումը:

Սույն ծրագրի բնույթից ելնելով՝ պետք է կարևորել կազմակերպության կազմում գործող Մանրէների ավանդադրման կենտրոնի բացառիկ նշանակությունը՝ որպես մանրէների հավաքածուի պահպանման, հարստացման և զարգացման երաշխավոր: Նշված խնդիրների լուծման համար ծրագրավորված են մանրէաբանների հետ համատեղ հետազոտություններ, որոնք ներառում են օգտակար նյութերի նոր արտադրիչների որոնումը, հայտնաբերումը, մեկուսացումը և ուսումնասիրությունը: Նախատեսվում է ՀՀ արտադրական կազմակերպությունների հետ գիտաարտադրական համագործակցության զարգացումը, գիտահետազոտական արդյունքների իրականացման համար փորձատեղակայանքների մշակումը և ստեղծումը:

Ծրագրի հաջող իրականացման նպատակով կօգտագործվի կենսատեխնոլոգիայի ոլորտում արդիական և ժամանակակից մեթոդաբանություն: Այսպես, բարձրակտիվ շտամ-արտադրիչների ստացման համար կօգտագործվեն խթանված մուտագենեզի և սումատիկ հիբրիդացման տարբեր մեթոդներ: Կենսատեխնոլոգիական արտադրություններում ցանքսանյութի պահպանման համար կօգտագործվեն լիոֆիլիզացիայի և կրիոկոնսերվացիայի մեթոդները: Կենսասինթեզի արգասիքների անջատման նպատակով կօգտագործվեն ֆլոտացիայի, ֆիլտրման և ցենտրիֆուգման մեթոդներ: Նպատակային նյութերի անջատման համար միկրոօրգանիզմների բջջապատերի քայքայումը կիրականացվի ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական մեթոդներով: Կենսասինթեզի կատալիզի հետևանքներից արժեքավոր նյութերի անջատման համար կօգտագործվեն էքստրակտման (պինդ-հեղուկ և հեղուկ-հեղուկ ֆազային),

իոնափոխանակային սորբացիայի, աջակցման, մեմբրանային ֆիլտրման և բյուրեղացման մեթոդներ: Կենսասինթեզի արգասիքների խտացումը կիրականացվի հետադարձ օսմոսի, ուլտրաֆիլտրման, գոլորշիացման և ջրազրկման մեթոդներով: Կենսաբանորեն ակտիվ նյութերի առավել արժեքավոր շտամ-արտադրիչների նույնականացումը կիրականացվի մանրադիտարկման, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և մոլեկուլային գենետիկայի մեթոդներով: Կենսաբանական և քիմիական ծագման նմուշների ֆիզիկաքիմիական անալիզները կիրականացվեն նրբաշերտային, իոնափոխանակային, գազային և բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի, ավտոմատ ամինաթթվային, անալիզի, էլեմենտային անալիզի մեթոդներով: Կօզտագործվեն նաև ամինաթթուների և պեպտիդների ասիմետրիկ սինթեզի, խառը քեմա-էնզիմոտիկ և այլ մեթոդներ:

4. Աշխատանքի բովանդակությունը:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի 2020թ. գիտական հետազոտությունների ծրագիրը հաշվի է առնում կենտրոնի ենթակառուցվածքների բազմամյա գործունեությունը՝ նպատակ ունենալով լուծել ՀՀ-ում կարևոր կենսական նշանակություն ունեցող խնդիրները:

Ծրագիրը նպատակաուղղված է բարձրացնելու գիտական հետազոտությունների արդյունավետությունը գերակա ուղղություններում, արագորեն գործնականում ներդնելու հիմնարար հետազոտությունների արդյունքները, զարգացնելու ենթակառուցվածքային և նյութական բազայի ապահովումը, զարգացնելու կադրային ներուժը և խորացնելու փոխհարաբերությունները առաջատար ԲՈՒՀ-երի հետ՝ պատրաստելու համար բարձր որակավորում ունեցող կադրեր:

Հետազոտությունների շարքին է դասվում ներքոհիշյալ նպատակների և խնդիրների իրականացումը, ըստ Կենտրոնի ստորաբաժանումների.

Ասիմետրիկ կատալիզի սեկտոր (դեկ.՝ ք.գ.թ. Աննա Մկրտչյան)

«Նոր արդյունավետ քիրալային կատալիզատորների ստացումը և փորձարկումը էնանտիոմերապես հարստացված ոչ սպիտակուցային ամինաթթուների ստացման ռեակցիաներում»

Նպատակը և խնդիրները

Գիտական հետազոտությունների նպատակն է օգտագործելով մեր կողմից սինթեզված Ni^{II} իոնի քիրալային ամինաթթվային կոմպլեքսները մշակել կողքային ռադիկալում ալիֆատիկ, հետերոցիկլիկ և չհագեցած (ալիլային, ագետիլենային և այլն) խմբեր պարունակող նոր ոչ սպիտակուցային օպտիկապես ակտիվ (S)- և (R)- α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզի արդյունավետ մեթոդներ: Նախատեսվում է նաև սինթեզել Co^{III} իոնի նոր մոդիֆիկացված ստերեոքիմիապես իներտ քիրալային կատիոնային կոմպլեքսներ և դրանք հետազոտել տարաբնույթ ոչ սպիտակուցային ամինաթթուների կատալիտիկ ասիմետրիկ սինթեզի ռեակցիաներում: Նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- սինթեզել Co^{III} իոնի նոր մոդիֆիկացված ստերեոքիմիապես իներտ քիրալային կատիոնային կոմպլեքսներ,
- փորձարկել սինթեզված Co^{III} իոնի մոդիֆիկացված քիրալային կատիոնային կոմպլեքսները բենզիլբրոմիդով α -ամինաթթուների C α -ալկիլման ռեակցիաներում,
- սինթեզել Ni^{II} իոնի հետ պրոպարգիլգլիցինի և (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ ամինաբենզաֆենոն քիրալային օժանդակ ռեագենտների Շիֆի հիմքերի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսը և հետազոտել դրա ամինաթթվային մնացորդի C α -ալկիլման ստերիոմետրիկ ռեակցիաները տարաբնույթ էլեկտրոֆիլ ագենտներով,
- մշակել պրոպարգիլգլիցինի α -տեղակալված ածանցյալների օքսիդիչ հետերո-համակցման ռեակցիայի (*Գլազերի ռեակցիա*) օպտիմալ պայմաններ:
- անջատել սինթեզված էնանտիոմերապես մաքուր նոր (S)- α -ամինաթթուները, հետազոտել և պարզաբանել նրանց կառուցվածքը և բարցարձակ կոնֆիգուրացիան:

- իրականացնել սնթեզված նոր ամինաթթուների կենսաբանական և դեղաբանական ակտիվությունների ուսումնասիրություններ:

Ամինաթթուների և պեպտիդների սինթեզի լաբորատորիա (դեկ. 'Չորայր Մարդիյան)
«Էնանտիոմերապես մաքուր չհագեցած խմբերով նոր ամինաթթուների և նրանցից կազմված պեպտիդների սինթեզ»

Նպատակը և խնդիրները

Հաշվի առնելով ամինաթթուների և պեպտիդների լայնածավալ կիրառման բնագավառները, կարելի է հստակորեն խոսակնհայտ է ինչպես նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների, այնպես էլ դրանցից կազմված կարճ պեպտիդների կարևորությունն ու արդիականությունը: Աշխատանքի նպատակն է մշակել կողմնային շղթայում չհագեցած խմբեր պարունակող նոր էնանտիոմերապես հարստացված ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի արդյունավետ մեթոդներ, ինչպես նաև հետազոտել դրանք պեպտիդների կառուցվածքի մեջ ներդրման գործընթացները՝ նոր պոտենցիալ դեղաբանորեն և կենսաբանորեն ակտիվ պեպտիդների ստացման համար: Նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- նախկինում սինթեզված (S)- α -պրոպարգիլալանինի հենքի վրա սինթեզել գրականության մեջ չնկարագրված կողմնային ռադիկալում ացետիլենային կամրջակով կապակցված տարբեր բնույթի տեղակալված արիլային մնացորդներ պարունակող էնանտիոմերապես մաքուր (S)- α -ամինաթթուներ,
- սինթեզել կողմնային ռադիկալում 1,2,3-տրիագոլային օդակով կապակցված տարաբնույթ բենզիլային մնացորդներ պարունակող էնանտիոմերապես մաքուր (S)- α -ամինաթթուներ, դի-, տրի- և տետրապեպտիդներ,
- հետազոտել սինթեզված չհագեցած խմբերով ամինաթթուները պեպտիդների կառուցվածքի մեջ ներմուծման հնարավորությունները, սինթեզի թվով 5 պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ դի-, տրի- և տետրապեպտիդներ՝ (S)- α -պրոպարգիլգլիցինի պարունակությամբ:
- իրականացնել կառուցված պեպտիդների կենսաակտիվության հետազոտում AutoGrid 4, AutoDock 4 և PASS-Online ծրագրերի օգնությամբ,
- մշակել առավել բարձր կենսաակտիվություն ցուցաբերած պեպտիդների ստացման մեթոդներ,
- սինթեզված միացությունները փոխանցել կենսակտիվության *in vitro* և *in vivo* հետազոտման համար:

Սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիա (դեկ. 'կ.գ.թ. Արթուր Համբարձումյան)

1. «Արտադրական նշանակություն ունեցող ֆերմենտների գեների էքսպրեսիոն կլոնավորում և ռեկոմբինանտ ֆերմենտների բնութագրում (արոմատիկ և ասպարտատ ամինատրանսֆերազներ)»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է IIS տիպի ռեստրիկցիոն էնդոնուկլեազների կիրառմամբ մոդուլային կլոնավորման տեխնոլոգիայով *Pectobacterium carotovorum*-ի տարբեր տեսակներից ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների էքսպրեսիոն կլոնավորումը *E.coli*-ի բջիջներում, ֆերմենտների շտամ-արտադրիչների ստացումը, ֆերմենտների անջատումը, մաքրումն ու բնութագրումը: Նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- մոդուլային կլոնավորման pETGG_CD-LacZ պլազմիդի կազմում *P.carotovorum*-ի տարբեր տեսակների արոմատիկ ամինատրանսֆերազների՝ ArAT_8134484, և ասպարտատ ամինատրանսֆերազների՝ AsAT_8132725, գեների կլոնավորում,
- ստացված պլազմիդային կոնստրուկցիաներով *E. coli*-ի ռեցիպիենտ բջիջների տրանսֆորմացում և ռեկոմբինանտ ամինատրանսֆերազային շտամների ստացում,

- *P.carotovorum*-ի տարբեր տեսակների ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների ռեկոմբինանտ շտամների աճեցում և համապատասխան ֆերմենտների անջատում ու մաքրում,
- *P.carotovorum*-ի տարբեր տեսակների ռեկոմբինանտ ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների համեմատական բնութագրում:

2. «*Geobacillus stearothermophilus* և *Thermotoga neapolitana* մանրէների հետերոլոգ *argJ* գեները կրող L-արգինինի նոր ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների բնութագրում»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է հանդիսանում նոր կառուցված *G.stearothermophilus* և *T.neapolitana* մանրէների հետերոլոգ *argJ* գեները կրող ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների L-արգինինի կենսասինթեզի մակարդակի ուսումնասիրումը, ցանքսային և ֆերմենտային միջավայրերի մշակումը, ինչպես նաև ռեկոմբինանտ պլազմիդների սեգրեգացիոն և կառուցվածքային կայունության ստուգումը: Նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- նոր կառուցված *E. coli* HK շտամ-արտադրիչների ռեկոմբինանտ պլազմիդներում *G.stearothermophilus* և *T. neapolitana* մանրէների *argJ* գեների առկայության ստուգում,
- *E.coli* HK շտամ-արտադրիչներում ռեկոմբինանտ պլազմիդների սեգրեգացիոն և կառուցվածքային կայունության ստուգում և ռեկոմբինանտ պլազմիդները պահպանող բջիջների ընտրություն,
- *E.coli* HK ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների արգինինի կենսասինթեզի մակարդակի որոշում միկրոկենսաբանական եղանակով,
- *E.coli* HK ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների արգինինի կենսասինթեզի մակարդակի որոշում ֆերմենտման միջոցով,
- *E.coli* HK ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների կենսասինթետիկ ակտիվության բարձրացման նպատակով ցանքսային և ֆերմենտման միջավայրերի մշակում:

ԿԱՆ-ի շտամ-արտադրիչների և կենսասինթեզի լաբորատորիա (դեկ. 'կ.գ.թ. Վահե Ղոչիկյան)

1. «L-տրիպտոֆանի արդյունավետ շտամ-արտադրիչի ստացում գենետիկասելեկցիոն եղանակներով»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է գենետիկայի և սելեկցիայի ճանապարհով ստանալ L-տրիպտոֆան սինթեզող շտամ-արտադրիչներ արտադրական տեսանկյունից առավել նպատակահարմար *Br. flavum* տեսակի մանրէի հիման վրա: Նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- որոշել *Br.flavum* 14067 վայրի տեսակի շտամի աճը ճնշող L-տրիպտոֆանի նմանակի՝ p-ֆտորֆենիլալինինի, նվազագույն կոնցենտրացիան և քիմիական մուտագենեզի եղանակով ստանալ նշված նմանակի նկատմամբ կայուն մուտանտներ,
- ստանալ trp⁻ թեստ- կուլտուրա *Br. flavum* 14067 շտամի մոտ ստացված p-ֆտորֆենիլալինինի նկատմամբ կայուն մուտանտների L-տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը մանրէաբանական եղանակով որոշելու նպատակով,
- մանրէաբանական եղանակով ընտրված մուտանտների L-տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը որոշել խորքային ֆերմենտացիայի եղանակով:

2. «Փորձարտադրական պայմաններում (250 Լ կենսատեակտորում) L-հիստիդինի կենսասինթեզի տեխնոլոգիական ցուցանիշների վերարտադրում և կատարելագործում նրա նոր նմանակների նկատմամբ կայուն բարձրակտիվ *Br.flavum* LGS-6 շտամ-արտադրիչի կիրառմամբ»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է 250 լիտրանոց կենսառեակտորում ուսումնասիրել L-հիստիդինի կենսասինթեզի տեխնոլոգիական ցուցանիշների վերարտադրման և կատարելագործման հնարավորությունները, նոր նմանակների նկատմամբ կայուն բարձրակտիվ *Br.flavum* LGS-6 շտամ-արտադրիչի կիրառմամբ՝ հետագայում առևտրայնացման համար: Նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- միկրոկենսաբանական եղանակով հետազոտել L-հիստիդինի ստացման տեխնոլոգիական ցուցանիշների (KLa, pH, pO₂, pCO₂) դինամիկան և բացահայտել դրանց օպտիմալացման հնարավորությունները փորձարտադրական պայմաններում,
- ուսումնասիրել շտամ-արտադրիչի ֆիզիոլոգիական ցուցանիշների դինամիկան կենսասինթեզի գործընթացում, մշակել ֆերմենտացիոն միջավայրի կազմի առանձին բաղադրիչների լրասնուցման, կենսասինթեզի արդյունավետության և արտադրողականության բարձրացման հնարավորությունները,
- փորձարտադրական պայմաններում ուսումնասիրել փրփրագոյացման դինամիկան, փրփրամարման և արդյունավետ փրփրամարիչների ընտրության հնարավորությունները L-հիստիդինի կենսասինթեզի գործընթացում,
- նոր նմանակների նկատմամբ կայուն բարձրակտիվ *Br.flavum* LGS-6 շտամ-արտադրիչի կիրառմամբ մշակել L-հիստիդինի ստացման նոր կատարելագործված տեխնոլոգիա փորձարտադրական պայմաններում՝ օգտագործելով տեխնոլոգիական ցուցանիշների ղեկավարման արդյունավետ, առաջադեմ մեթոդներ:

ԿԱՍ-երի մաքրման և սերտիֆիկացման լաբորատորիա (ղեկ.՝ ք.գ.թ. Ավետիս Ծատուրյան)

1. «Որոշ ֆլավանոիդների (կվերցետին, ռուտին, տանին) քանակական և որակական նույնականացման ԲԱՀՔ մեթոդի մշակում և վալիդացում»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի շրջանակներում իրականացվող հետազոտությունների նպատակը ֆլավանոիդների (կվերցետին, ռուտին, տանին) քանակական և որակական նույնականացման ԲԱՀՔ մեթոդի մշակումը և վալիդացումն է: Մեթոդի վալիդացումն իրականացվում է մեթոդի հուսալիությունն ու կիրառության նպատակահարմարության հաստատման համար: Նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել.

- ՀՖ ԲԱՀՔ համակարգին համապատասխան սորբենտի և շարժուն ֆազի ընտրություն,
- մեթոդի պայմանների մշակում, ընտրություն և օպտիմալացում (Ֆլավանոիդների մոդելային լուծույթների կիրառմամբ),
- մեթոդի վալիդացում, որը ընդգրկում է վերը թվարկված վեց կետերը:

2. «Տարբեր տիպի բուսական հումքի թափոններից մելանինի անջատման և մաքրման եղանակների մշակում ու որոշ ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և օպտիմալացնել ֆիզիկաքիմիական պրոցեսները, որոնք ընկած են տարբեր տիպի բուսական հումքի թափոններից մելանինի ստացման հիմքում: Նախատեսվում է մշակել տարբեր տիպի արտադրական թափոններից ալլո- (բուսական ծագման) մելանինի անջատման և մաքրման բարձր արտադրողականությամբ քիչ թափոնային եղանակներ, որոշել անջատված մելանինի որոշ ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկություններ: Ներկայացված նպատատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- որոշել բուսական ծագման հումքի թափոնների թթվային և հիմնային հիդրոլիզի իրականացման օպտիմալ ցուցանիշները,
- որոշել բնական հումքից անջատված մելանինները ուղեկցող խառնուրդներից մաքրման օպտիմալ եղանակները,

- ուսումնասիրել ջրում անլուծելի մեղանյութերը ջրալույծ ձևի փոխարկման հնարավորությունը,
- ուսումնասիրել ստացված ալլոմելանինի կենսաբանական և որոշ ֆիզիկաքիմիական հատկությունները:

Հալենային և նորհալենային դեղապատրաստուկների լաբորատորիա (դեկ. ' ք.գ.դ. Սլավիկ Դադայան)

«Դեղաբուսական հումքից ԿԱՆ-ի անջատման արդյունավետ մեթոդների մշակում, հալենային և նորհալենային դեղապատրաստուկների փորձանմուշների ստացում և մասնակի կենսաբժշկական հետազոտությունների իրականացում»

Նպատակը և խնդիրները

Ներկայացվող աշխատանքի գիտական նպատակներն են հազվագյուտ և համեմատաբար քիչ ուսումնասիրված բուսական հումքերի ԿԱՆ-ի անջատման և մաքրման արդյունավետ մեթոդի մշակումը (լուծամզման ելքը $\geq 85\%$), որը հնարավորություն կտա առավելագույնս պահպանել բույսերում առկա կենսակտիվ նյութերի օգտակար հատկությունները, ստանալ մատչելի և բարձրակտիվ հալենային և նորհալենային դեղապատրաստուկներ, ստանալ փորձանմուշներ՝ իրականացնել դրանց կենսաբժշկական հետազոտություններ: Հետազոտության նպատակն է.

1. Մշակել դեղաբուսային հումքերից ԿԱՆ-ի լուծամզման և մաքրման բարձրարդյունավետ մեթոդ, ստանալ հալենային և նորհալենային պատրաստուկներ և իրականացնել դրանց կենսաբժշկական մասնակի (հակաօքսիդանտային և հակաուռուցքային ակտիվության գնահատման) հետազոտություններ:
2. Մշակված սեփական լաբորատոր տեխնոլոգիայի հիման վրա ստանալ առավել բարձրակտիվ պատրաստուկների փորձանմուշներ:
Աշխատանքի շրջանակում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.
 - նպատակային դեղաբուսային հումքերի (կլորավուն տանձատերև, հաճարենու և բոխու կախասնկեր, նշի, սալորի կորիզամիջուկների քուսպ և այլն) անհրաժեշտ քանակների պաշարում և օդա-չորային վիճակի բերում,
 - կլորավուն տանձատերևի հակաօքսիդանտային բարձր ակտիվությամբ օժտված սպիրտա-ջրային հալենային պատրաստուկի ստացման արդյունավետ մեթոդի (լուծամզման պրոցեսն իրականացվում է հումքի նախնական վակուումիզացումից հետո զազային ազոտի հոսքի պայմաններում) մշակում,
 - բոխու և հաճարենու կախասնկերի սպիրտա-ջրային լուծամզվածքների ստացման օպտիմալ պայմանների մշակում (պրոցեսները վակուումիզացման և զազային ազոտի հոսքի պայմաններում իրականացնելիս),
 - նշի և սև սալորի կորիզամիջուկների թաղանթներից վիտամին B-17-ի օպտիկապես ակտիվ գերմաքուր նմուշների անջատման օպտիմալ պայմանների մշակում,
 - անջատված B-17-ի քիմիական մոդիֆիկացման օպտիմալ պայմանների մշակում և հեպտացիլամիդոլինի օպտիկապես ակտիվ գերմաքուր նմուշի ստացում,
 - անջատված վիտամին B-17-ի և դրա հեպտացիլ ածանցյալների կառուցվածքային նույնականացում և օպտիկական մաքրության աստիճանի հետազոտում (Կենտրոնի ԿԱՆ-երի մաքրման և ֆիզիկա-քիմիական անալիզի լաբորատորիայի և ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի ԳԱԿ-ի Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման կենտրոնում),
 - ստացված հալենային և նորհալենային դեղապատրաստուկների հակաօքսիդացիոն և հակաուռուցքային (ՆՕՔԻ քիմիական թերապիայի և ուռուցքաբանության լաբորատորիայի հետ գիտատեխնիկական համագործակցության գործող պայմանգրի շրջանակներում) ակտիվությունների հետազոտում և գնահատում:

Մննդի կենսաանվտանգության լաբորատորիա (դեկ. ' կ.գ.թ. Կարինե Չիտյան)
«Մննդամթերքի երկարատև պահպանման մանրէաբանական մեթոդի մշակում»

Նպատակը և խնդիրները

Աշխատանքում նպատակ է դրվել.

- ուսումնասիրել նախկինում մեկուսացված բարձր հակամանրէային ակտիվությամբ օժտված կաթնաթթվային մանրէները և նրանցից անջատված մանրէասպան միացությունները, որոնք համընդհանուր ճանաչված են որպես ապահով (GRAS)՝ սննդի պահպանման ժամկետը երկարաձգելու համար:
- ուսումնասիրել մեր կողմից ստացված հակամանրէային պատրաստուկների ազդեցությունը տարբեր սննդամթերքների պահպանման վրա:
- ընտրել մանրէներ (ԿԹԲ), ստանալ նրանց հակամանրէային մետաբոլիտները, ստուգել դրանց ազդեցությունը սնունդը փչացնող մանրէների վրա, մշակել մեթոդներ, որոնք կլինեն քիմիական կոնսերվանտներով սննդի մշակման այլընտրանք:
- Նպատակին հասնելու համար նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.
- հակամանրէային ակտիվությամբ օժտված կաթնաթթվային մանրէների և նրանց կողմից սինթեզվող հակամանրէային միացությունների համեմատական ուսումնասիրությունը և հեռանկարային շտամների ընտրությունը,
- ուսումնասիրել ընտրված կաթնաթթվային բակտերիաների հակամանրէային ազդեցությունը տարբեր սննդամթերքներից (բուսական, մսային պահածոներ և այլն) մեկուսացված փչացում առաջացնող միկրոօրգանիզմների վրա օգտագործելով կենդանի մանրէներ,
- կաթնաթթվային բակտերիաների կենդանի բջիջների և նրանցից անջատված հակամանրէային արգասիքների ազդեցության ուսումնասիրությունը սնունդ փչացնող միկրոօրգանիզմների աճի վրա տարբեր սննդամթերքների նմուշներում:
- մշակված կենսամեթոդի կիրառում սննդամթերքի նմուշների զգայաբանական հատկությունների վրա ազդեցության ուսումնասիրության համար՝ համաձայն ՀՄՍ-պահանջների և ԳՈՄՍ-ի:

Էկոլոգիական անվտանգության լաբորատորիա (դեկ. 'կ.գ.թ. Նեյլի Հովհաննիսյան)

1. **«Հակաբիոտիկների նկատմամբ կայունություն ապահովող գեների հետազոտում հողից անջատած *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղերին պատկանող մանրէների շտամերում»**

Նպատակը և խնդիրները

Հակաբիոտիկների նկատմամբ կայուն մանրէների գենետիկական հետազոտությունները հիմնավորված են կայուն շտամերի առաջացման և արագ տարածման պրոցեսների կանխման անհրաժեշտությամբ: Աշխատանքի նպատակն է մանրէների հավաքածուում պահպանվող հողից անջատած *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղի մանրէների ցեֆալոսպորինների և ազիտրոմիցինի նկատմամբ կայունության ուսումնասիրումը և ապահովող գեների տեղակայման որոշումը: Ներկայացվող նախագիծը նախորդ տարում կատարված աշխատանքների շարունակությունն է: Նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել.

- հետազոտել *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղի մանրէների կայունությունը ցեֆիքսիմի, ցեֆտրիաքսոնի, ցիպրոֆլոքսացինի և ազիտրոմիցինի նկատմամբ:
- որոշել ցեֆիքսիմի, ցեֆտրիաքսոնի, ցիպրոֆլոքսացինի և ազիտրոմիցինի նկատմամբ կայուն շտամերում *blaOXA-10* և *aac (6)II* գեների առկայությունը:
- հետազոտվող շտամներում որոշել ցեֆիքսիմի, ցեֆտրիաքսոնի, ցիպրոֆլոքսացինի և ազիտրոմիցինի նկատմամբ կայունություն ապահովող գեների տեղակայումը (քրոմոսոմ, պլազմիդ):

2. **«Ֆիտոպաթոգեն շտամերի աճի վրա էնտոմոպաթոգեն շտամերից արտազատվող միացությունների ազդեցության ուսումնասիրում»**

Նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է բացահայտել *B.thurigiensis* և *Brevibacillus laterosporus* շտամերի կողմից արտազատված հակաֆիտոպաթոգեն ակտիվություն ցուցաբերող նյութեր: Ներկայացված նպատակին հասնելու համար նախատեսվում է.

- բացահայտել *B.thurigiensis*-ի շտամեր, որոնք համատեղ կուլտիվացման պայմաններում արգելակում են *Pectobacterium carotovorum*, *Rhodococcus fascians* և *Pseudomonas syringae* ֆիտոպաթոգենների աճը, ընտրել առավել ագրեսիվ *B.thurigiensis*-ի շտամեր,
- բացահայտել *B.laterosporus*-ի շտամեր, որոնք համատեղ կուլտիվացման պայմաններում արգելակում են *Pectobacterium carotovorum*, *Rhodococcus fascians* և *Pseudomonas syringae* ֆիտոպաթոգենների աճը, ընտրել առավել ագրեսիվ *B.laterosporus*-ի շտամեր,
- հետազոտել ընտրված *B.thurigiensis* և *Brevibacillus laterosporus* շտամերի կուլտուրալ հեղուկում պարունակվող նյութերի ազդեցությունը *Pectobacterium carotovorum*, *Rhodococcus fascians* և *Pseudomonas syringae* ֆիտոպաթոգենների աճի վրա:

3. «Պոլիմեր կենսաքայքայող շտամերի լիպազային, պոլիֆենոլօքսիդազային և պրոտեազային ակտիվության ուսումնասիրում»

Նպատակը և խնդիրները

Պլաստիկ նյութերի կենսաքայքայումը հանդիսանում է բնապահպանության հրատապ խնդիրներից մեկը, որի լուծումը պահանջում է օգտագործել տարբեր գիտական ուղղությունների մոտեցումներ: Մանրէների սկրինինգը՝ ըստ դրանց կենսաքայքայող հատկությունների, և այդ պրոցեսին մասնակցող ֆերմենտների հետազոտումը խնդրի լուծման կարևոր և անհրաժեշտ մասն են հանդիսանում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել կենսաքայքայմանը մասնակցող ֆերմենտների արտազատումը ՄԱԿ հիմնարկում պահպանվող կենսաքայքայող հատկություններ ցուցաբերող մանրէների կողմից, ընտրել առավել ակտիվ շտամեր: Ներկայացված նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել.

- ուսումնասիրել լիպազային ակտիվությունը կենսաքայքայող մանրէների շտամներում,
- ուսումնասիրել պոլիֆենոլօքսիդազային ակտիվությունը կենսաքայքայող մանրէների շտամներում,
- ուսումնասիրել կենսաքայքայող մանրէների պրոտեոլիտիկ հատկությունները,
- հետազոտել պոլիէթիլենի և պոլիէթիլենտերեֆտալատի կենսաադեգրադացումը ընտրված շտամների կիրառմամբ:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիա (դեկ. 'ան.գ.թ. Վիզեն Գոզինյան) «Ֆոտոսինթեզող մանրէների կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրում և կենսատեխնոլոգիական արտադրությունում նրանց կիրառման հեռանկարների գնահատում»

Նպատակը և խնդիրները

Հաշվի առնելով 5-ամինալուլինաթթվի (ԱԼԹ) և նրա ածանցյալների գործնական նշանակությունը բժշկության, գյուղատնտեսության, կենսատեխնոլոգիայի, օրգանական և կենսօրգանական սինթեզի մեջ, աշխատանքի նպատակն է ԱԼԹ-ի ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների ստեղծումը և նրա կենսատեխնոլոգիական ստացման գիտական հիմքերի մշակումը: Նպատակի իրականացման համար նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

- ստեղծել գենետիկական կառուցվածքներ, որոնք պարունակում են ԱԼԹ-ի կենսասինթեզի մասնակցող ֆերմենտների գեներ՝ *Rhodobacter azotoformans* և *Rba. sphaeroides* կուլտուրաների կիրառմամբ,
- ուսումնասիրել գենահինժեներային եղանակով ստացված ԱԼԹ-ի արտադրիչ հանդիսացող շտամների ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունները,

- ուսումնասիրել գենահիմնադրային եղանակով ստացված կուլտուրաների մոտ արտաքին գործոնների (սննդամիջավայրի կազմ, pH, ջերմաստիճան, կուլտիվացման տևողություն) ազդեցությունը ԱԼԹ-ի կենսասինթեզի պրոցեսի վրա,
- ուսումնասիրել տարբեր միկրոօրգանիզմների միջոցով թափոնաչրերի մաքրման հնարավորությունները, ինչպես նաև ստացված կենսազանգվածների կիրառման հեռանկարները:

Մետաղների կենսատարրավացման լաբորատորիա (ղեկ.՝ Կ.Գ.Պ. Նարինե Վարդանյան)
«Մանրէային կոնսորցիումների ստացում, ուսումնասիրում և կիրառում առաջնային և երկրորդային հումքերից պղնձի և այլ արժեքավոր մետաղների արդյունավետ կենսակորզման գործընթացումներում»

Նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակը քեմալիթոտրոֆ բակտերիաների (ՔԲ) կենսաբազմազանության ուսումնասիրությունն է, արդյունավետ մանրէային կոնսորցիումների մեկուսացումը և ստացումը՝ արժեքավոր մետաղների կենսակորզման գործընթացներում կիրառելու նպատակով: Նախատեսում է իրականացնել հետազոտություններ Հայաստանի մետաղային հանքավայրերի բնական և տեխնածին բիոտոպերի ՔԲ կոնսորցիումների մանրէաբանական կազմի, ֆիզիոլոգիկենսաքիմիական՝ այդ թվում նաև ապարների օքսիդացման, էլեկտրոնային թափոնների տարրալուծման յուրահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ: Ստացված արդյունքների հիման վրա կմշակվեն կայուն մանրէային համակեցություններ և նոր կենսատեխնոլոգիական մոտեցումներ՝ հանքային և երկրորդային հումքից (տարբեր թափոններից) մետաղների արդյունավետ կենսակորզման համար: Ներկայացված նպատատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Հայաստանի մետաղական հանքավայրերի բնական և տեխնածին բիոտոպերից մեկուսացնել և ուսումնասիրել ՔԲ կոնսորցիումներ,
- սկրինինգի և ադապտացման մեթոդների կիրառմամբ ստանալ ՔԲ կայուն, բարձր դիմացկունությամբ և ադիեզիայի ու մետաղների կենսատարրալուծման բարձր արդյունավետությամբ օժտված մանրէների խառը կուլտուրաներ և կոնսորցիումներ,
- մշակել ադապտացված արդյունավետ տեխնոլոգիական մոտեցումներ՝ Քաջարանի օքսիդացած և սուլֆիդային հանքաքարերից և էլեկտրոնային թափոններից պղնձի և այլ արժեքավոր մետաղների մանրէաբանական ստացման համար:

